

Կարծիք

Հրանուշ Սուրենի Չաքյանի՝ «Կրկնասեռության իմաստային-գործառական դրսևորումները հայերենում» ժ.02.01 «Հայոց լեզու» մասնագիտությամբ բանասիրական գիտությունների դոկտորի գիտական աստիճանի հայցման ատենախոսության մասին

Հայերենի բայական համակարգում սեռային տեղաշարժերը և կրկնասեռությունը՝ իբրև քերականական իրողություններ, արժանի են համակողմանի քննության: Եթե առաջին դեպքում բայը պատմական զարգացման ընթացքում մի սեռից անցում է կատարում մեկ այլ սեռի, ապա կրկնասեռության դեպքում, ինչպես վկայում է անվանումը, երկու քերականական սեռի հատկանիշները միևնույն բառայթում հանդես են գալիս միաժամանակ:

Կրկնասեռ բայ եզրույթն առաջին անգամ կիրառել է Ա. Աբրահամյանը «Բայը ժամանակակից հայերենում» մենագրության մեջ (էջ 703), որտեղ տալիս է նաև կրկնասեռ բայերի սահմանումը, այն է՝ բայի միևնույն բառաձևի սահմաններում երևան եկող ոչ թե մեկ, այլ երկու սեռերի առանձնահատկությունների դրսևորումը՝ առանց բառական-քերականական լրացուցիչ փոփոխությունների (տե՛ս նույն տեղում): Կրկնասեռություն կարող է առաջանալ իմաստափոխության, խնդրառական-սեռային տեղաշարժերի, լծորդության պատմական փոփոխության, լծորդությունների նույնացման, այլևայլ պատճառներով:

Կրկնասեռության երևույթը հատուկ է հայերենի զարգացման բոլոր փուլերին և ընդգրկում է լեզվում լայն տարածում ունեցող բայերը, որոնք աչքի են ընկնում գործածության հաճախականությամբ: Ուստի կրկնասեռության ուսումնասիրությունը հայ քերականագիտության կարևոր և ամբողջությամբ դեռ չուսումնասիրված խնդիրներից է:

Հայերենի զարգացման ընթացքում կրկնասեռության իմաստային-գործառական դրսևորումներին է նվիրված Հրանուշ Չաքյանի սույն ատենախոսությունը, որը ողջունելի և կարևոր քայլ է խնդրի լուսաբանման մեջ, այս առումով արդիական է և սպասված:

Հետազոտության նպատակը հատակ է հայերենի պատմական զարգացման երեք շրջանների՝ գրաբարի, միջին և արդի հայերենների լեզվական փաստերի նորովի ուսումնասիրության հիման վրա տալ հայերենի բայական համակարգում կրկնասեսության իրողության առաջացման, պատմական զարգացման, իմաստային-գործառական դրսևորումների հնարավորինս ամբողջական նկարագրությունը ինչպես համաժամանակյա և տարժամանակյա հայեցակետերով, այնպես էլ ցեղակից լեզուների համեմատությամբ:

Ինչպես և սպասելի էր, աշխատանքը բաղկացած է երեք գլուխներից, որոնցից առաջինում հեղինակը քննության է առնում նախ՝ դասական գրաբարի բայական համակարգը, որտեղ կարևոր տեղում է Աստվածաշնչի թարգմանության կրկնասեռ բայերի քննությունը, ապա՝ այս փուլը դիտում է որպես սկզբնական ժառանգություն հետդասական գրաբարի և հայերենի մյուս փուլերի համար:

Մյուս գլուխները համապատասխանաբար միջին և արդի հայերենների կրկնասեռ բայերի, դրանցում գրաբարյան շերտի և հետագա զարգացումների ուսումնասիրություններն են: Հետազոտությունն ավարտվում է եզրակացություններով, հավելվածով, որն էլ իր հերթին ընդգրկում է տեսական 6 և աղյուսակային 24 նյութ:

Աշխատանքի համապատասխան գլուխներում հեղինակը դրսևորում է գիտական հետազոտություն կատարելու, փաստերը համադրելու, եզրահանգումներ անելու հմտություններ: Աշխատանքի *հիմնական արժանիքներն* են

1. Հայերենում սեռային տեղաշարժերի հետ կապված մի շարք հարցերի պատասխանների որոնումն ու հայտնաբերումը: Օրինակ՝ արժեքավոր է, որ աստենախոսության հեղինակը առանձնացնում է դասական և հետդասական գրաբարի կրկնասեռ բայերը, տալիս դրանց բայացանկերը, նշում կարևոր առանձնահատկությունները: Այսպիսով՝ ի դեմս դասական գրաբարի կրկնասեռ բայերի՝ առանձնացնում է հայերենի կրկնասեռ բայերի պատմական ժառանգության շերտը:

2. Հատկապես հաջողված և կոկիկ է միջինհայերենյան կրկնասեռ բայաշերտի քննությանը նվիրված գլխի ներքին բաժանումը: Այստեղ չկան խճճված ենթագլուխներ,

կրկնվող ու հատվող առանձնահատկություններ. կա հստակ տարբերակում գրաքարյան և միջինհայերենյան բայաշերտերի:

3. Ողջունելի է և շատ կարևոր, որ ատենախոսության հեղինակը քննում է ոչ միայն բառարաններում վկայված կրկնասեռ բայերը, այլև դրանց ցանկերը հարստացնում է բնագրային տարբեր աղբյուրների քննությունից դուրս բերած սեփական օրինակներով: Օրինակ՝ 347-րդ ծանոթագրության մեջ նշում է այն բոլոր աղբյուրները, որոնցից օգտվել է միջին հայերենի կրկնասեռ բայերի ցանկը հարստացնելու համար:

4. Գործնական տեսակետից կարևոր և գնահատելի են այն աղյուսակները, որոնք աշխատանքի վերջում բերում է հեղինակը՝ ներկայացնելով գրաքարի, միջին հայերենի և արդի հայերենի կրկնասեռ բայերի այբբենական ցանկերը, որոնք ընդգրկում են շուրջ 1000 բառային միավոր:

Գնահատելով կատարված մեծ աշխատանքը՝ անդրադառնանք այն թերություններին, որոնցից չի կարողացել խուսափել հեղինակը, և որոնց շտկումները կարևոր են աշխատանքի հետագա բարելավման համար:

1. Աշխատանքի հիմնական թերությունը թերևս կառուցվածքային է:

ա Անտեղի և մանր բաժանումների են ենթարկվել առաջին և երրորդ գլուխները: 1.1, 1.2, 3.1 և այլ ենթագլուխների կողքին ա-է ենթակետերը դժվարացնում և շփոթեցնում են ընթերցողին՝ հաճախ ստիպելով վերադառնալ գրականության ցանկին՝ հասկանալու, թե ինչու էր այդպիսին բաժանումը:

բ Ե՛վ առաջին գլխի երրորդ ենթագլուխն է անվանված «Հետդասական գրաքարի կրկնասեռ բայերը» (էջ 135), և՛ առաջին հավելվածը՝ երեք ենթաբաժիններով (էջ 362): Այստեղ ներկայացված է հունարենի ազդեցությամբ կազմված կրկնասեռ բայերի քննությունը, որը աշխատանքի բուն մասում բացակայում է: Բայց հենց աշխատանքի բուն մասում՝ էջ 138-ում, տեղ է գտել հունաստիպ քերականների շրջանի մասին եզրահանգում՝ առանց որևէ օրինակի: Հարց կարող ենք տալ հեղինակին ինչու՞ է կարևոր տեղեկույթը ներկայացրել հավելվածում և չի ընդգրկել աշխատանքի համապատասխան բաժիններում:

Կարևոր կետ է նաև կրավորական և կրավորակերպ չեզոք բայերի հարցը, որին աշխատանքի հեղինակը նույնպես թուուցիկ անդրադարձել է միայն հավելվածում՝ էջք 410-415-ում, որտեղ նշում է, որ Ա Աբրահամյանը չի ընդունում կրավորական/չեզոք

հակադրությունը, իսկ ինքն ընդունում է՝ բերելով ընդամենը 10 բայի օրինակ և որևէ կերպ չմեկնաբանելով, թե ինչու է կրկնաստեռություն եզրույթի տակ, այնուամենայնիվ, հասկանում և քննում միայն ներգործական և չեզոք կրկնաստեռություն ունեցող բայերը:

գ□ Հավելված 7՝ «Աղյուսակներ» բաժինն ունի իր առանձին բովանդակության ցանկը՝ էջ 419-420: Ատենախոսը անտեղի մանրացրել է բայացանկերը՝ գրաբարի կրկնաստեռ բայերը հավաքելով 10 տարբեր աղյուսակներում: Մեր համոզմամբ՝ ավելորդ էին բայերն ըստ լծորդությունների ներկայացնելը (դա պարզ է ցանկացած ուսումնասիրողի համար), կրկնաստեռ բայերը նախ՝ պարզ, առմիջուկային, համատիպ բաժանումներով տալը, ապա՝ դրանք միավորելը մեկ աղյուսակում, մոտավորապես նույնը անելը հետդասական գրաբարի կրկնաստեռ բայերի համար: Այս ամենը կարելի էր ներկայացնել մեկ համահավաք աղյուսակում՝ դասական և հետդասական շրջաններից մեկի համար կիրառելով որևէ պայմանանշան, իսկ մնացած ամեն ինչ կարելի էր ներկայացնել մեկ ընդհանուր վիճակագրական աղյուսակով, որը չկար: Հավելվածներում տարբեր հատվածներ կրկնվել են: Օրինակ՝ հավելված 3-ում ներկայացնում է սեռային համաժամանակյա տեղաշարժերը արդի հայերենում՝ էջք 393-398, իսկ 470-472 էջերի 21-րդ աղյուսակում կրկնում է նույն բայերը: Նույն կրկնությունը կա հավելված 4-ի երկու էջերի հետ՝ էջք 379 և 400:

դ□ Անհասկանալի է նաև գլուխների վերջում տարբեր կերպ բերված եզրահանգումների տարբերակումը: Որակական առումով նույնն են էջ 165-ի որպես ընդհանրացումներ նշված երեք կետերը և 166-167 էջերում բերված եզրահանգումները: Անհասկանալի է՝ ինչու են դրանք իրարից առանձնացված ներկայացվում: Ավելին՝ առաջին հատվածի վերջին կետը ներկայացված է նաև եզրահանգումների 4-6 կետերում: Նույնկերպ են ներկայացված նաև միջին հայերենի կրկնաստեռ բայերի քննությանը նվիրված գլխի ամփոփումները: Այստեղ էլ կետերով տրված եզրահանգումներից (էջ 183-184) գրաբարյան նմանությունների ա, բ կետերը և եզրահանգումների երրորդ կետը նույնն են:

ե□ 211-223 էջերի նյութը աղյուսակի ձևով տալը նպատակահարմար չէ: Ամբողջ էջեր գրեթե դատարկ են՝ բաղկացած 3-4 նախադասություններից: Օրինակ՝ միայն *ծաղկել* բայի համար /բառարանում կա 28 իմաստ/ բերված է 20 իմաստ: *Խոռովել* բայը նույնությամբ տրված է ն՝ էջ 195-ում, և՛ 221-222-ում:

Եթե ամփոփենք այս դիտարկումները, չենք կարող չնշել մի կարևոր հանգամանք:
Չ. Չաքյանը մի քանի տեղերում հիշատակում է, որ այս թեման ուսումնասիրված է իր
թեկնածուական ատենախոսության մեջ և հետագայում տպագրված հատկապես երեք
մենագրություններում՝ գրաբարի, միջին հայերենի և արդի հայերենի կրկնասեռ բայերն
ընդգրկող: Համեմատության համար վերցրել ենք միայն գրաբարի կրկնասեռ բայերի
քննությանը և դրանց պատմական զարգացմանը նվիրված աշխատությունը, որը
բաղկացած է 240 էջից՝ «Չին հայերենի կրկնասեռ բայերը» տարժամանակյա
քննություն» խորագրով, Գյումրի, 2015 թ: Մեր խնդրո առարկան չէ պարզել, թե
աշխատանքի որքան մասը իրավունք ունենի կազմելու արդեն ուսումնասիրված և
տպագրված նյութերը, և որքան մասը պետք է ընդգրկել նոր արված աշխատանքը,
սակայն նշենք, որ հեղինակն ակնհայտորեն այնքան էլ ազնիվ չի վարվել սեփական
աշխատությունների նկատմամբ՝ գրեթե միշտ դրանցից օգտվելով, բայց տողատակում
հղում չտալով: Բերենք միայն երկու օրինակ՝ Ա լծորդության կրկնասեռ բայերին
նվիրված ենթազույգը գրեթե նույնությամբ է սկսվում երկու տեղում էլ (մենագրության
էջ 158 և ատենախոսության էջք 109-110), ատենախոսության 84-85 և մենագրության 59-
րդ էջերում նույն բայերն են քննված՝ նույն օրինակներով, գրեթե նույն
հաջորդականությամբ՝ *կծկել, գարշել, խուճապել, լքանել*, իսկ առաջին գլխի ավարտին
բերվող եզրահանգումները գրեթե նույնական են վերոհիշյալ մենագրության 170-171
էջերի եզրահանգումների հետ: Սակայն նշվածներից բոլորում հղումը մենագրությանը
բացակայում է: Չարմանալի է, քանի որ սովորաբար ատենախոսությունն է դառնում
մենագրություն, այս դեպքում տարբեր մենագրություններ միավորվելով դարձել են
ատենախոսություն, իսկ թե ատենախոսության մեջ կրկնասեռության ինչ նոր ձևեր,
նոր իմաստային դրսևորումներ են քննվել, առանձին ուսումնասիրության առարկա է:
Մեր արածը փոքրիկ համեմատություն էր:

2. Լծորդական տարբերություններով պայմանավորված երևույթը, կարծում ենք,
կրկնասեռություն չէ: Այս հարցում Չ. Չաքյանը երկակի մոտեցում է ցուցաբերել: Նախ՝
աշխատանքի 69-րդ էջում նշում է՝ «Ըստ ավանդական մոտեցման՝ *կրկնասեռությունը
քերականական տարբեր սեռերի նշանակությունների համատեղումն է բայական նույն
բառայթում առանց ձևական-ձևաբանական փոփոխությունների*», իսկ 95-րդ էջում
նշում է՝ «Սեռային զուգահեռության դեպքում կրկնասեռությունը դրսևորվում է *ե-ի*

քերականական լծորդափոխությամբ (է լծորդով արտահայտվում է ներգործական, իսկ՝ / լծորդով՝ չեզոք սեռի իմաստ», որը հակասում է կրկնասեռության սահմանմանը: Նույնիսկ եթե աշխատանքի հեղինակի սկզբունքն է քննել նաև լծորդի փոփոխությամբ, խոնարհման տիպով պայմանավորված ներգործական/չեզոք կրկնասեռությունը հայերենում, հեղինակը՝

ա□ Պետք է ամենայն ուշադրությամբ ընտրել օրինակները՝ բացառելով կրավորական սեռի դրսևորման որևէ օրինակ, ինչը չի արել (*խուճապիմ* բայը բերված առաջին օրինակում կրավորական սեռի իմաստով է կիրառվել՝ էջ 84, «Իսկ Վաղես կայսր չարամահ սատակեցաւ» օրինակում (էջ 162) բայն ունի ն՛ մեռավ (չեզոք), ն՛ սպանվեց (կրավորական) իմաստները, նույն կերպ և *խաբանեցաւ* բայը 170-րդ էջի օրինակում): Ավելին՝ իր բերած օրինակների մեծ մասում վիճելի է բերված բայերի՝ ի լծորդության պատկանելը: Օրինակ՝ անցյալ անկատարով (վշտագնէին (էջ 366), գտանէին (էջ 374)) կամ անցյալ դերբայով (վշտագնեալ (էջ 366), գանագանեալ (էջ 373)) և այլն:

բ□ Պետք է դրանք քննել իրարից բացառապես առանձին, անկախ մաքուր կրկնասեռ բայերից, ինչը նորից արված չէ:

գ□ Պետք է իր կազմած բառացանկերում դրանք տար երկլծորդ կազմություններով, ինչը բացակայում է:

Մեր կարծիքով՝ հեղինակի նշած իմաստով սեռային զուգահեռություն երևույթը կրկնասեռություն չէ և աշխատանքի շրջանակում չպիտի քննվեր: Հատկապես ներգործական/չեզոք անցումը՝ պայմանավորված է>ի լծորդիչների փոփոխությամբ, արդյունք է կրավորականության իմաստի դրսևորման, որը հայերենում սկիզբ էր առել դասական գրաբարից էլ ավելի վաղ, իսկ դասական շրջանում արդեն ուներ հստակ դրսևորում: Եթե սեռային զուգահեռությունները կրկնասեռություն չհամարվեին, գրաբարի և միջին հայերենի համար առանձնացված բայերը իսկապես կլինեին կրկնասեռ (թեև թվով անհամեմատ ավելի քիչ), ինչը աշխատանքի հիմնական նպատակն էր: Իսկ այսպես դեռ առանձին ուսումնասիրություն է պետք կատարել բուն կրկնասեռ բայերը տրված ցանկերից գտելու, առանձնացնելու համար:

3. Եթե գրաբարում է>ի անցումը լծորդություններում քերականորեն դրսևորվող իրողություն է, ապա միջին հայերենի համար բացարձակ անընդունելի է սեռային

գուգահեռություններ երևույթը, քանի որ ի լծորդությունը հասակ դրսևորում ունի անորոշ դերբայից սկսած՝ *արծել-արծիլ, ժողվել-ժողվիլ, գնտանել-գնտանիլ, խաբանել-խաբանիլ, ժածել-ժածիլ, կտրել-կտրիլ, կալնել-կալնիլ* և այլն: Այսպիսով՝ նշենք, որ լծորդական տարբերություններով պայմանավորված սեռային տարբերությունները կրկնասեռություն չեն: Միջին հայերենում կրկնասեռ դարձած բայերից ընդունելի են *բռնել, զճել, զմայլել, ուսնիլ* բայերը (էջք 172-175), իսկ հավելվածում վկայված մյուս բայերը լրացուցիչ քննություն են պահանջում՝ կրկնասեռությունը փաստելու համար: Այդպես նաև միջինհայերենյան նորակազմ կրկնասեռ բայերից (հեղինակի հիշատակությամբ մոտ 2 տասնյակ) կրկնասեռ չէ բերված 6 գույզից և ոչ մեկը (էջ 183)՝ նույն պատճառաբանությամբ:

4. Հեղինակը հատկապես զրաբարի և միջին հայերենի համար չի տարբերակում պարզ և ածանցավոր գուգահեռների գոյությունը: Օրինակ՝ *ցանկալ* բայի համար բերված օրինակներում կա *ցանկանալ* բայը (էջ 86) (ի դեպ, նույն վրիպումը հանդիպում է նաև վերոնշյալ գրքում՝ էջ 61): *Արձակել-արձկնալ-արձկենալ-արձակնալ* շարքի բայերը ոչ թե հնչյունական տարբերություններ ունեն (ինչպես նշում է հեղինակը՝ էջ 156), այլ պարզ-և-են-ան- սոսկաձանցավոր կազմություններ են, նաև տարբեր լծորդությունների բայեր: Հենց ածանցներով է պայմանավորված դրանց՝ տարբեր սեռեր ունենալը՝ *արձկել-ը*՝ ներգործական, իսկ ածանցավորները՝ չեզոք: *Յերկարել* բայի հետ միջինհայերենյան թվարկված ձևերից որևէ մեկը՝ *յերկայննալ, յերկայնալ, յերկաննալ, յերկրել*, նույնիսկ սեռային գուգահեռություն չի կազմում (էջ 162): 45-րդ ծանոթագրության մեջ փոքրիկ դիտարկում է արվում, որ կրկնասեռ բայերը կարող են ունենալ գուգահեռ գործածվող ածանցավոր բայաձևեր: Այս դիտարկումը հաստուկ ուշադրության էր արժանի, քանի որ շատ հարցերի պատասխաններ կարող էր տալ: Օրինակ՝ ինչպե՞ս է զարգանում կրկնասեռ բայերի գործածությունը, ո՞ր բայերն են, որ մաքուր կրկնասեռություն են դրսևորում, և որո՞նք են, որոնց կրկնասեռության երկրորդ, հիմնականում չեզոք սեռի իմաստը արտահայտվում է այլ բայով (հեղում-հեղանիմ, լուծեմ-լուծանեմ-լուծանիմ, մեքենայեմ-մեքենայանամ-մեքենանամ, գարշեմ-գարշանամ և այլն):

5. Երբեմն հեղինակի բերած թվական տվյալները կասկած են հարուցում:

ա□ 237-րդ ծանոթագրության մեջ նա նշում է շուրջ 250 բայ դասական գրաբարի համար՝ 100-ը՝ 6-7-րդ դարերից վկայված, 100-ը՝ 8-10-րդ դարերից վկայված: Բայց գրաբարյան կրկնասեռ բայերի ընդհանուր թիվը նշում է շուրջ 500: Հարց՝ որտեղի՞ց են ավելանում մոտ 50 բայերը:

բ□ Էջ 178-ում միջին հայերենի տարժամանակյա կրկնասեռ բայերի թիվը համարում է շուրջ երկու տասնյակ, էջ 183-ում նորակազմ կրկնասեռ բայերի թիվը՝ շուրջ երկու տասնյակ, իսկ էջ 185-ում բերված տրամագրում տարժամանակյա կրկնասեռների թիվը համարում է 7%, իսկ նորակազմներինը՝ 10%: Միայն հավելվածում բերված աղյուսակից է պարզ դառնում, որ իրականում տարժամանակյա բայերի թիվը 11 է (համաձայնենք, որ սա շուրջ 20 չէ), իսկ համաժամանակյա բայերինը՝ հենց 20 (սա էլ շուրջ 20 չէ): Ավելին՝ 318-րդ էջի եզրակացություններում դրանց թիվը նշված է համապատասխանաբար 20 և 30:

գ. Այդպես նաև շուրջ 250 գրաբարյան կրկնասեռ բայ է նշում միջին հայերենի բառամթերքում, բայց հավելվածում բերված աղյուսակում ընդհանուր թիվը 220 է: Եթե սրան ավելացնենք միջինհայերենյան կազմությունները՝ թվով 31, ապա կստացվի 251: Բայց միջին հայերենի համար բերված ընդհանուր աղյուսակում այդ թիվը հասնում է 265-ի, և անհասկանալի է մնում, թե որտեղից ավելացավ 14 բայ, և համաժամանակյա՞, թե՞ տարժամանակյա կազմություններ են դրանք (իսկ թե որ բայերն են այդ ավելացածները, առանձին երկար որոնում է պետք կատարել):

դ□ Էջ 468-ի 18-րդ աղյուսակում տալիս է միջին հայերենից արդիին անցած 8 բայ, որոնց մեջ կա *եփել* բայը, որը մինչ այդ չի հանդիպում: Մինչ այդ էջ 235-ում հնացած է համարում *խալսել*, *աղբել*, *մճճել*, *ձաբոտել* բայերը: Ստացվում է, որ միջին հայերենից արդիին անցել են ոչ թե 8, այլ 12 բայ:

ե□ Էջ 112-ում նշում է շուրջ 2-3 տասնյակ բայ, ու լծորդության 4-5 կրկնասեռ բայ, բայց բերում է նախ՝ *երդնուլ*, *յաւելուլ*, *առաւելուլ* բայերը, ապա՝ ևս երեք բայ՝ *հեղուլ*, *ոստնուլ*, *հեղձնուլ* (վերջին երկուսն առանց օրինակների և բացատրության): Ի դեպ, ու լծորդության *յաւելուլ*, *առաւելուլ*, *հեղուլ* բայերի համար կարող էր նշել, որ գրաբարում դրանք ներկայի հիմքից կազմվող ժամանակաձևերում կրկնասեռություն են դրսևորում, բայց կատարյալի հիմքից կազմվող ժամանակաձևերում ներգործաձև-կրավորաձև փոփոխությամբ արտահայտում են նբ/չբ իմաստներ: Օրինակ՝ *յաւելից-*

յաւելցի, առաւելի-առաւելայ, հեղին-հեղան ձևերը նբ/չբ սեռային հակադրություն ունեն բառարանային վկայություններում: Էջ 108-ում գրում է, որ 70 ածանցավոր բայերի միայն 5%-ն է ներգործական սեռի, այսինքն՝ քանի՞սը՝ 3, 3.5, թե 4: Բերում է միայն *հատանել, լքանել* բայերը՝ վերջինիս օրինակներում խառնելով *լքել-լքանել* բայագույգը:

գ□ Միսլ են նշված բարդ սկզբնահիմքով և պարզ սկզբնահիմքով բայերը դասական և հետդասական գրաբարի համար՝ համապատասխանաբար 20 և 50, 50 և 20 (էջ 136-ի տրամագիր), մինչդեռ պետք է լիներ հակառակը:

է□ Էջք 191-197-ում ձևախմբաբանային առումով անփոփոխ կրկնասեռ բայերը, ըստ հեղինակի, 30-ն են, սակայն բերում է համադրական կրկնասեռություն ունեցող 15 և սեռային գուգահեռություն ունեցող 7 բայ՝ որպես ամբողջական ցանկ: Մյուս 8 բայերի ճակատագիրն անհայտ է մնում:

6. Համաձայն չենք որոշ բայեր կրկնասեռ համարելու մտքին: Օրինակ՝ էջ 84-ում պարզ չէ, թե ինչու է *գարշեացես* բայը ներգործական սեռի, եթե ուղիղ խնդիրը *պղծել* բային է վերաբերում: Կամ էջ 154-ում երկրպագել/երկիրպագել բայը բերված չորս օրինակներում էլ չեզոք սեռի է՝ երկիրպագեմք խաչին, երկրպագեցին նմա, երկրպագեաց գագանին և երկրպագեմ քեզ: Գրաբարյան օրինակների քննությունը ՆՀԲ-ում նույնպես ցույց է տալիս, որ *երկիր պագանել* բայը պահանջում է տրական հոլովով խնդիր (երկիր եպագ ժողովրդեան, պագ երկիր այսմ, պագ երկիր այնմիկ): *Հոտոտալ* բայի համար բաց է թողել բառարանում վկայված գնա ուղիղ խնդիրը, որից չի հասկացվում՝ բայը ներգործական է, թե չեզոք: *Հոտոտալ* բայի համար մեկ օրինակ է բերում ՄՀԲ-ից: Թեև հեղինակը նշում է, որ իր աշխատանքում չի բավարարվել միայն բառարանային տվյալների ուսումնասիրությամբ, բայց իր օրինակների մեծ մասը հենց բառարանային վկայություններով են հանդես գալիս, որոնցից շատերում կրկնասեռությունը դժվար է փաստել: Դիցուք՝ *սքալ, սովրիլ, քրտել* բայերը տալիս է մեկական նախադասությամբ (էջ 154), որտեղ բայերի կրկնասեռությունը հստակ դրսևորված չէ: *Կարգել* բայը միջին հայերենում նոր իմաստ է ձեռք բերել, սակայն նույն ներգործական սեռի է մնացել (էջ 170), իսկ *կարգվիլ-ը կարգել* բայի հետ կրկնասեռ չի կարող համարվել և՛ լծորդության փոփոխության, և՛ -վ- ածանցի պատճառով: Միջին հայերենում կրկնասեռություն ստացած բայերի մեջ բերում է *մեզել* բայը (էջ 170), սակայն բերում է միայն մեկ օրինակ՝ չեզոք սեռի իմաստով կիրառությամբ: *Խորովել,*

վճարել բայերի համար նույնպես միայն մեկ օրինակ է բերում (էջ 163): Իսկ նույն էջի *հնագանտեալ* ձևը սեռային զուգահեռություն չի արտահայտում: Այսպիսով՝ այդ շարքում նշված բայերից սեռային զուգահեռություն ունեն միայն *սողոսկել-սողոսկիլ* բայերը: Կարծում ենք՝ աշխատանքը մեծապես կշահեր, եթե հեղինակն առանձնացներ այն բայերը, որոնք ինքն է հայտնաբերել որպես կրկնասեռ բայեր՝ դրանք առանձնացնելով բառարանային վկայություններից:

7. Հեղինակը որևէ կերպ չի մեկնաբանում, թե ինչու է նբ/կբ կրկնասեռությունը մերժում՝ այսպիսով անտեսելով ի լծորդության բայերի քննությունը, քանի որ հենց նրանցում է լավագույնս դրսևորվում երկու սեռի իմաստը (ծնաւ՝ և՛ ծնեց, և՛ ծնվեց, բուսաւ՝ և՛ աճեց, և՛ աճեցրեց): Թե ինչու է նախապատվությունը տալիս նբ/չբ կրկնասեռությանը, և եթե ի լծորդության կրկնասեռ բայեր չկան, ինչու՞ է 1.1.գ կետը կոչվում «Ի և ու լծորդությունների կրկնասեռ բայեր», պարզ չէ (տե՛ս բովանդակության մեջ՝ էջ 2):

8. Աշխատանքում կան նաև տարաբնույթ սխալներ, որոնք բերենք ստորև

ա) Ինչու՞ է հեղինակը պարզ համարում *հատնիլ* բայը (էջ 157), եթե միջին հայերենում, արևմտահայերենում հանդիպում են *հատած է, հատաւ* բայաձևերը: Այդպես նաև գրաբարյան *հեղձանել* բայի համար պարզ է համարում *հեղձկիլ* բայը, մինչդեռ այն *հեղձուկ* արմատից կազմություն է և չունի *խեղդամահ լինել* իմաստը (էջ 157):

ՄՀԲ-ն տարբեր բայեր է համարում *հաւսրել* և *հաւսրիլ* բայերը՝ առաջինը՝ նբ, երկրորդը՝ չբ նշանակությամբ, որովհետև դրանցում տեսնում է *հավասարեցնել* և *տարածվել* իմաստները: *Հաւսրիլ* բայում հեղինակն ավելացնում է *հավասարվել* իմաստը, բայց դարձյալ բերում է բառարանային օրինակը, որտեղ այն ունի *հավասար տարածվել* իմաստը, ոչ *հավասարվել* (էջ 155): Այդ իմաստը բաց է թողնված նաև 160-րդ էջի աղյուսակում: Այդպես է քննված նաև *շաղղել-շաղղիլ* բայագույգը:

բ) *Մերժել* բայի կրկնասեռության համար անհասկանալի է «Եւ մերժեայ յինէն զԲասս արքայ՝ Իսրայէլի» օրինակը: Ի՞նչ կազմություն է այստեղ հեղինակի կողմից ընդգծված *մերժեայ*-ն (էջ 95): Իսկ *ճառագայթել* բայի համար նախ՝ սետորոշ օրինակ չէ նրա որոշչային կիրառությունը՝ *ճառագայթող*, ապա՝ «ճառագայթեցին Մարքսի զլիում» օրինակում ներգործական սեռի դրսևորում տեսնելը (էջ 193):

գ Էջ 95-ում *յորդել* բայի յորդեցեն ձևում ե>ի լծորդություն չկա: Հեղինակը ՆՀԲ-ում կարող էր գտնել *յորդեցան* անցյալ կատարյալի օրինակը: Այս *յորդեցեն* բայաձևով օրինակը և նմանատիպ բայաձևերն առավել ուշադրությամբ պետք է քննվեին, քանի որ հենց նրանք են հնարավորություն տալիս միևնույն բայաձևի մեջ, առանց ձևային-ձևաբանական փոփոխության, ներգործականություն և չեզոքություն արտահայտել:

Համաձայն չենք էջ 96-ում հեղինակի բերած փոքրիկ բառաշարքին, որտեղ բերված բայերը «իմաստային որևէ ընդհանրություն չունեն», և 246-րդ ծանոթագրությանը, որտեղ նշված է, որ արդի լեզվամտածողությամբ այդ իմաստները անհամատեղելի են: Որպես օրինակ բերված են *խանձել* բայը՝ *այրել* իմաստի կողքին *սաստիկ փափագել* իմաստով, *տրուփել* բայը՝ *ոտքերով կոխկոտել*, *թնդալ*, *դղրդալ*: Նույն միտքը կրկնում է նաև եզրակացություններում՝ էջ 114՝ 10-րդ կետ: Միայն 121-րդ էջում *խանձել* բայի կրկնաստեղծությունը բացատրում է *խանդ-խանձ* նույնարմատ բառերով:

դ Էջ 74-ում հեղինակը նշում է, որ բնագրային ոճական կիրառությունները սեռային անցումների, կրկնաստեղծության դրսևորումներ չեն, 201-րդ ծանոթագրության մեջ էլ նշում է, որ այդպիսի քերականական երևույթը ժամանակավոր է, սակայն իր ընտրած օրինակներում սրան այնքան էլ ուշադրություն չի դարձնում: Օրինակ՝ *ընկղմել* բայը չեզոք իմաստով արդի հայերենում չկա, *թախանձելը*՝ նույնպես (էջ 207): *Ձեռնարկել* բայը չեզոք չէ, իսկ ԱԲԻ սահակյանի օրինակը հնացած է (էջ 209): Հին է նաև գրաբարյան պահպանված իմաստ համարվող *խոստացավ չերկարել ճանփորդությունը* օրինակը: Այդպես նաև *զլանալ* բայը (էջ 192): Անհաջող է գրաբարի *պատրաստել* բայի օրինակը արդի հայերենում նոր նշանակություններով համալրված համարելը (էջ 199): Նշենք, որ ԷԱղայանը բառարանում պարզապես խիստ մանրամասներով է գրել՝ համաձայնեցնելով իր գտած օրինակների հետ: Նաև *վկայել* բայի համար նոր իմաստ չպետք է համարել *որպես վկա դատարանում ցուցմունք տալը* (էջ 200). չէ՞ որ գործողության իմաստը նույնն է: *Շինել* բայի կրկնաստեղծությունը փոխաբերական գործածության հետևանք է (էջ 202): Ընդհանրապես, կարծում ենք՝ արդի հայերենի համար կարիք չկա նշելու, թե որևէ բայ ինչ իմաստներ ուներ գրաբարում, որո՞նք են անցել արդի հայերենին, և որո՞նք են նոր առաջացել: Կարծում ենք՝ պետք էր միանգամից տալ նորերը:

ե՞ Էջ 183-ում *հանդարժել* բայի վերլուծությունը խառնվել է *կափկափել* բայի վերլուծությանը:

զ՞ Ավելորդ է էջ 141-145-ում ներկայացված «Հարցի պատմությունից» ենթազույլը, քանի որ անդրադառնում է ոչ թե միջինհայերենյան կրկնասեռ բայերի ուսումնասիրության պատմությանը, այլ միջին հայերենի շրջանաբաժանմանը, միջին հայերենի մասին քերականական աշխատությունների թվարկմանը: Բուն հարցին անդրադառնում է միայն 145-րդ էջի վերջին պարբերությամբ:

է՞ Համաձայն չենք այն պնդմանը, որ միջին հայերենում, ի տարբերություն գրաբարի, կրկնասեռ բայեր են կազմվում ոչ միայն բնիկ, այլև փոխառյալ արմատական բառերից (էջ 183): Գրաբարյան բայերի դեպքում արմատների ծագումը քննության առարկա չի դարձել, իսկ մեր թուուցիկ ուսումնասիրությամբ բայացանկից պատահականորեն վերցված հինգ բայից երեքի՝ *ազահել*, *ախորժել*, *ամբոխել* բայերի արմատները փոխառյալ բառեր են, որոնցից հայերենի բառակազմական կանոններով ստեղծվել են համապատասխան բայերը:

ը՞ Էջ 259-ում նորաբանություն է համարում *աստունքել*, *զանգահարել* բայերը:

թ՞ Ն՞Պողոսյանի աշխատության վերնագրում առկա տարբեթվերը սխալ են նշված ն՞ ծանոթագրության մեջ, և՞ գրականության ցանկում: Ոչ թե 1512-1572, այլ 1512-1712, այն ընդգրկում է շուրջ 200 տարվա ձեռագրերի հիշատակարանների լեզուն: Բայց միայն սա չէ խնդիրը: Ծանոթագրության մեջ որպես բնագրային էջ հեղինակը նշում է էջ 130: Հարց է առաջանում՝ որտեղի՞ց է գտել 130-րդ էջը, եթե աշխատությունն ունի 86 էջ: Ու նաև *ճապաղել* բային զուգահեռ *ճապաղգել* բայը հնչյունական տարբերակ և կրկնասեռ չէ այդ բայի հետ: Ձեռագրերի կազմի դարձերեսներին տարբերվող թանաքով, հաճախ անփութությամբ արված գրչագրությունները այս դեպքում չեն կարող լուրջ եզրահանգման հիմք հանդիսանալ: Համաձայն ենք, որ *ճապաղել*-ը գրաբարում կրկնասեռ է՝ նբ/չբ հակադրությամբ, սակայն հեղինակը պետք է նկատեր, որ նրա նբ իմաստը միջին հայերենում չի պահպանվել, իսկ չեզոք սեռի իմաստը կրկնակի դրսևորում է ստացել՝ *ճապղիլ* և *ճապաղ կենալ* ձևերով, որոնք կիսում են այս բայի գրաբարյան համապատասխանաբար ցրվել՝ *սփռվել*, *տարածվել* և *ցրվել՝ անուշաղիք լինել* իմաստները: Այսպիսի զարգացումները միջին հայերենում քիչ չեն՝ կապված *կենալ*, *լինել*, *առնել* բայերով կազմվող հարադրությունների ակտիվացման հետ, որը

պետք է հեղինակի ուշադրության առարկան լինեն և օգներ բացատրելու գրաբարյան կրկնասեռ բայերի նվագումը միջին հայերենում, այդպիսով նաև հասնելու ասոնախոսության խնդիրներին (էջ 8-ի 5-րդ և 7-րդ կետերին):

ԺՊ Անմիօրինակություն է, երբ ողջ աշխատանքում գրաբարի և միջին հայերենի համար բայը մերթ անորոշ դերբայով է նշված, մերթ ներկա անկատարով:

ԺաՊ Համանուն բայերի սեռային տարբեր իմաստները չպետք է կրկնասեռության դրսևորում համարել: Աշխատանքում հանդիպում են միջինհայերենյան *քշտել* (էջ 173), *ծաղկել* (էջ 217), արդիհայերենյան *շրջել* (էջ 455) բայերը, որոնք համանուններ են, ոչ թե միևնույն բայի իմաստային զարգացումներ:

ԺբՊ Գրականության ցանկում «Համաբարբառներ» բաժնի ցանկից թվում է, թե նշված բոլոր աղբյուրները համաբարբառներ են, մինչդեռ այդպես չէ՞ դրանք համաբարբառներ են և գրաբարյան բնագրեր (էջ 335): «Միջին հայերենի բառարանի» հեղինակները ներկայացված պետք է լինեն Ղազարյան ՌՊ, Ավետիսյան ՀՊ հաջորդականությամբ, ոչ թե հակառակը: Այստեղ նաև հարց է, թե ինչու է հեղինակն օգտվել միևնույն բառարանի երկու տարբեր հրատարակություններից (էջ 335): Նաև հաջող չէ միջինհայերենյան բնագրերի համառոտագրության ցանկը, որը վերաճել է գրքերի հրատարակության ցանկի (էջք 357-360):

ԺգՊ Աշխատանքը մեծապես կշահեր, եթե հեղինակը հատկապես արդի հայերենում քններ այն կրկնասեռները, որոնք վիճահարույց են, լուծումներ առաջարկեր, կանխատեսումներ աներ, ոչ ցանկալի-նախընտրելի ձևեր առանձնացներ, մեկնաբաներ զարգացման միտումները, ի վերջո հայերենի զարգացման բոլոր փուլերի համար տար կրկնասեռ բայերի լիարժեք և ամբողջական ցանկեր, ինչը շատ կհետաքրքրեր հարցն ուսումնասիրողին /օրինակ՝ արդի հայերենի կրկնասեռների ցանկից դուրս են մնացել շատ գործածական այնպիսի բայեր, ինչպիսիք են՝ *սպրել*, *աշխատել*, *նայել*, *լսել*, *վայելել* և այլն, դրա փոխարեն կան *գարունել*, *արեգակել* /բանաստեղծական/, *ներհայել*, *սուլսուլել*, *արմնկել* և այլն խիստ հազվադեպ հանդիպող բայեր/:

Նշված թերությունների մի մասը, իհարկե, անխուսափելի է նման հսկայածավալ հետազոտության մեջ, և փաստ է, որ կատարված է զգալի աշխատանք:

Այսպիսով, ի մի բերելով ասվածը, ամփոփենք. Հրանուշ Սուրենի Ջաքյանի «Կրկնասեռության իմաստային-գործառական դրսևորումները հայերենում» ատենախոսությունը, նշված թերություններով հանդերձ, այնուամենայնիվ, գիտական մակարդակով իրականացված հետազոտություն է, շարադրված է գիտական պատշաճ ոճով, առաջադրված խնդիրները հիմնականում լուծված են, օգտագործված է լեզվական ու լեզվաբանական հարուստ նյութ: Սեղմագրում ներկայացված դրույթները համապատասխանում են ատենախոսության բովանդակությանը, հրապարակված աշխատանքները լիովին արտացոլում են ատենախոսության հիմնական բովանդակությունը:

Սույն ատենախոսությունը համապատասխանում է ՀՀ գիտական աստիճանաշնորհման կանոնակարգի 7-րդ կետի պահանջներին, բավարարում է ժ.02.01 «Հայոց լեզու» մասնագիտությամբ բանասիրական գիտությունների դոկտորի գիտական աստիճանին ներկայացվող պահանջները, ինչը հիմք է տալիս միջնորդելու ՀՀ ԳԱԱ ՀՀԱՃառյանի անվան լեզվի ինստիտուտում գործող ԲԿԳԿ-ի՝ գիտական աստիճանների շնորհող 019 մասնագիտական խորհրդի առջև՝ նրա հեղինակին շնորհելու իր հայցած բանասիրական գիտությունների դոկտորի գիտական աստիճանը:

Պաշտոնական ընդդիմախոս

բ. գ. դ., պրոֆեսոր՝

Հաստատում եմ ստորագրությունը

ԵՊՀ գիտքարտուղար՝



Ա. Հ. Աքաջյան



Մ. Հովհաննիսյան



08.05.2025